Ես ուզեցի զբաղեցնել նրանց:

— Դուք ունէք շատ աղախիններ, — ասեցի ես, — էլ ինչո՞ւ էք ինքներդ այսքան նեղութիւն քաշում:

— Մենք խօ հիւանդ չենք, — պատասխանեց Թուլթին, — որ հանգիստ պառկենք ու ոչինչ չշինենք:

— Աղախինն էլ ունի իր գործերը, — պատասխանեց միւսը աւելի խոհեմ կերպով:

— Ընկերիդ որտե՞ղ ես թողել, — հարցրուց Թուլթին:

Ես իմացայ, որ Ասլանի մասին է հարցնում:

— Քո հօր հետ գնացել են, չեմ իմանում որտեղ:

— Նրա սրտում սատանայ է նստած, դու գիտե՞ս, — հարցրուց Թուլթին բարկացած ձայնով:

— Ինչո՞ւ ես այսպէս խօսում, խենթ, — զգուշացրեց նրան տիկինը եւ սկսեց կշտամբել: — Ասլանը շատ լաւ տղայ է:

— Բայց ձիւնի պէս սառն է նա:

— Ինչո՞ւ, նրա՞ համար, որ քեզ հետ սիլի-բիլի (սէթեւեթ) չէ՞ անում:

Այս երկուսի վիճելուց ես իսկոյն հասկացայ Թուլթիի ատելութեան պատճառը դէպի Ասլանը: Երեւում էր, խղճալի աղջիկը սիրում էր նրան, եւ սառնասիրտ, անգութ Ասլանից մերժուած էր եղել: Բայց Թուլթին չհանգստացաւ տիկնոջ խօսքերով, եւ աւելի բարկանալով ասաց.

— Ես մի՛շտ կասեմ, նրա սրտում սատանայ է նստած. նա խիղճ չունի. դրա համար էլ ոչ մի աղջիկ նրան լաւ տղամարդ չի ասի...

Ես նկատեցի նրա աչքերի արտասուքը. նա էլ չսպասեց, առեց իր սափորը եւ սկսեց դիմել դէպի վրանները:

Նրա գնալուց յետոյ տիկինը ինձ պատմեց, թէ մի օր բէկի վրանում մի քանի քուրդ իշխաններ ժողով են ունեցել, նրանց մէջն է եղել եւ Ասլանը: Ժողովի խորհրդածութիւնը հասել է տաք վիճաբանութեան, որի մէջ Աբդալլահի որդի Ահմէն խօսքով վիրաւորել է Ասլանին: Այս Ահմէն նշանաւոր էր քրդերի մէջ իր ժանտ բնաւորութեամբ եւ միեւնոյն ժամանակ իր տարօրինակ ուժով: Ասլանը չէ համբերում, յարձակւում է նրա վրայ, եւ երեխայի նման կաշկանդելով, խլում է ժողովի միջից, եւ վրանից դուրս քարշ տալով, կամենում է սպանել նրան: Ժողովի բոլոր իշխանները վրայ են թափւում, հազիւ կարողանում են ազատել վիթխարի Ահմէին Ասլանի ձեռքից: Թուլթին տեսնում է այս